

ՀԱՅԿԱՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Երևանի պետական համալսարան
hovhaykaz@gmail.com

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵԼԲՈՒԹՈՎ

Բանապի բառեր՝ գեներալ Բելբութով, հայ զորավար, ռուսական բանակ, պատերազմ, հաղթանակ, տարեգրություն, ներդրում:

Ներածություն

Վասիլ Օսիպովիչ Բելբութովը (Բարսեղ Հովսեփի Բելբությանը) ծնվել է 1791 թ. Թիֆլիսում՝ Բելբութովների նշանավոր ընտանիքում: Պապը՝ Բարսեղ Բելբութովը, վրաց թագավոր Հերակլ 2-րդի հետ մասնակցել էր Նադիր-Շահի հնդկական արշավանքներին, վարել էր Թիֆլիսի մելիքի պաշտոնը: Վասիլ Բելբութովի հայրը՝ Հովսեփ Բելբութովը, վրացական բանակի կազմում տարիներ շարունակ կռվել է պարսիկների դեմ, 1804 թ. մասնակցել է Պավել Ֆիշիանովի Երևանյան արշավանքին, ստացել է գնդապետի աստիճան և պարզմատրվել Սք. Աննայի 2-րդ աստիճանի ադամանդակուր շքանշանով:

Վասիլը երեք եղբայրների մեջ թեպետ կրտսերն էր, սակայն ամենից ուշիմն էր: 1802 թ., երբ Թիֆլիսում բացվեց ազնվականական դպրոց, Վասիլ Բելբութովը դարձավ այդ դպրոցի սովորողներից մեկը: Դպրոցն ավարտելուց հետո նրան ուղարկում են Պետերբուրգ՝ գինվորական կրթություն ստանալու, ինչն այդքան գրավում էր Երիտասարդ Վասիլին:

1807–1809 թթ. Բելբութովը հաջողությամբ ուսանում է Պետերբուրգի կադետական կորպուսում և ավարտելուց հետո ստանում է Ենթասպայի աստիճան: Ի դեպ, դպրոցում ավանդույթ է եղել լավագույն սովորողների նկարները փակցնել կորպուսի ընթերցապրահում. ընդամենը տասը ընտրյալների շարքում տեղադրվում է նաև կովկասցու արտաքինով Բելբութովի դիմանկարը:

Ռազմական առաջին մկրտությունը և առաջին հաղթանակները:

Վերադառնալով հայրենիք՝ Բելբութովը գործուղվում է Խերսոնյան գրենադերական գունդ՝ որպես գումարտակի համիարզ: Ռազմական ուսուցիչները

*Հոդվածը ներկայացվել է 08.02.21, գրախոսվել է 07.05.21, ընդունվել է դպագրության 02.08.21:

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵԿԻԲՈՒԹՅՈՒՆ

Իի հարցում Վ.Բեկիբությունի բախտը մշտապես բերել է: Սկզբում նա նշանավոր գեներալ Տորմասովի համհարզն էր: 1810 թ., երբ դեռ չէր բոլորել Բեկիբությունի քսանամյակը, նա մասնակցություն է ունենում Ախալցխայի բերդի պաշարմանը, որն էլ դառնում է իր առաջին ռազմական մկրտությունը: 1811 թ. գեներալ Տորմասովին Կովկասում փոխարինելու է գալիս գեներալ-լեյտենանտ մարկիզ Պառվուչին: Շուտով սկսվում է 1812 թ. հայրենական պատերազմը և Պառվուչին նշանակվում է ռուսական Առաջին բանակի շտաբի պետ: Վասիլ Բեկիբությունը որպես վերջինիս համհարզ, մեկնում է գործող բանակ: Այսպիսով, տակավին երիտասարդ Բեկիբությունի վիճակվում է դառնալ 1812 թ. հայրենական պատերազմի մասնակիցը՝ մարտերով Ռիգայի մատուցներից հասնելով մինչև Մեմել: Ավելին, այդ պատերազմում նա հասցնում է վաստակել իր առաջին լուրջ պարգև և կոչումները: 1813 թ. սկզբին Բեկիբությունը պարգևատրվում է Սրբական 3-րդ աստիճանի շքանշանով, տեղափոխվում է Լեյբ-գվարդիական Սեմյոնովյան գունդ և ստանում պորուչիկի աստիճան:

Ճիշտ է, համհարզի կարգավիճակն այնքան էլ չէր հրապուրում Բեկիբությունին. նրա տարերքը ռազմի դաշտն էր, սակայն նշանավոր գեներալների, այն էլ կառավարչապետների համհարզ լինելը լավագույն հնարավորությունն էր տարածաշրջանում խմորվող իրադարձություններին անմիջական մասնակցություն ունենալու համար: 1816 թ. նա արդեն Կովկասի նոր կառավարչապետ, նշանավոր գեներալ Ավեքսեյ Երմոլովի համհարզն էր, որի հետ էլ մասնակցում է հանրահայտ պարսկական դեսպանությանը: Կովկասի կառավարչապետին հատկապես զարմացնում է երիտասարդ գորականի պարսկերենի և հայերենի գերազանց իմացությունը: Բեկիբությունը վարժ տիրապետում էր նաև ռուսերենին, վրացերենին և թուրքերենին, մասնակիորեն նաև ֆրանսերենին և գերմաներենին: Ի դեպք, Պարսկաստանում նրան շնորհում են Առյուծի և Արևի 2-րդ աստիճանի շքանշան, իսկ վերադարձից հետո ստանում է կապիտանի աստիճան:

1819–1820 թթ. Բեկիբությունը Երմոլովի հետ միասին մասնակցություն է ունենում Կովկասի լեռնականների դեմ սկսված կրիվներին, վաստակելով քաջ ու հմուտ հրամանատարի համբավ: Երմոլովին այստեղ արդեն հաճելիորեն զարմացրեցին երիտասարդ սպայի ռազմական խորը գիտելիքները և մարտ վարելու նրա արտասավոր ունակությունները: Բեկիբությունը պարգևատրվում է Սրբական 4-րդ աստիճանի շքանշանով: Այստեղ էլ մարտերից մեկի ժամանակ, Խոզորեկի մոտ կայանում է նրա հանդիպումը իր մեծահամբավ հայրենակցի՝ գեներալ Մադարովի հետ: Սակայն եթե վերջինս

Հովհաննիսյան Հ.

արդեն ճանաչված անուն էր Ռուսաստանում, ապա Բեհրովովի համար դեռևս նոր էր սկսվելու ռազմական տարեգրությունը, որը պետք է նրան՝ իր հայրենակցի նման, բարձրացներ փառքի աստիճաններով: 1821 թ. Վասիլ Բեհրովովը տեղափոխվում է Լեյբ-գվարդիական Մոսկվայան գունդ, որտեղ էլ ստանում է գնդապետի նոր ռազմիկները: 1821 թ. հովհանն Բեհրովովը նշանակվում է Մինօրեյյան գնդի հրամանատար: Չորս տարի անց, 1825 թ. Բեհրովովը նշանակվում է Իմերեթիայում գործող 22-րդ դիվիզիայի հրամանատար և մարզի կառավարիչ, իսկ 1828 թ. սկզբներին, երբ դեռ նոր էր բոլորելու երեսունյոթամյակը, Վ. Բեհրովովն արժանանում է գեներալ-մայորի աստիճանի:

Ծառայությունը Կովկասում: Ախալցխայի պաշտպանությունը:

1828 թ., երբ սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, գլխավոր հրամանատար Իվան Պասկվիչը Բեհրովովին հրավիրեց գործող բանակ և նրան վստահեց ջոկատներից մեկի հրամանատարությունը: Բեհրովովի առաջին ակնառու հաջողությունն այս պատերազմում Ախալցխայի բերդի գրավումն էր: Վերջինս թուրքական կարսորագույն ամրություններից մեկն էր Անդրկովկասում և ուներ բնական ու պաշտպանական հզոր պատնեշներ: Թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Քյոսա-Մահմեդ փաշան կատաղի դիմադրություն էր ցուց տալիս: Ավելին, երբ օգոստոսի 12-ին Պասկվիչը հայազգի շտաբս-կապիտան Ղորլանյանի միջոցով փորձեց թուրք փաշային անձնատուր լինելու առաջարկ անել, փաշան պատասխանում է՝ «Մեզ միայն թուրն է բաժանում»¹:

Օգոստոսի 15-ին սկսվում է Ախալցխայի բերդի գլխավոր գրոհը: Գեներալ Բեհրովովը գտնվում էր առաջին գծում և անձնական օրինակով ոգևորում էր զինվորներին: Բերդը շոտով գրավվում է, նրա հետ միասին նաև Ախալցխան: Այս փայլուն հաղթանակի համար Վ. Բեհրովովը պարզաբար պատասխանում է՝ «Մեզ միայն թուրն է բաժանում»:

Բերդի գրավումից հետո Վ. Բեհրովովը նշանակվում է Ախալցխայի կառավարիչ: Մի ամբողջ տարի՝ մինչև 1829 թ. օգոստոսի 22-ը, Բեհրովովը վարում է Ախալցխայի մարզային վարչության պետի պաշտոնը: Թե որքան արդյունավետ է եղել Բեհրովովի կառավարչությունը Ախալցխայում, այդ մասին իր գրքում պատմում է ռուս պատմաբան Վ. Պոտտոն. «Իշխան Բեհրովովը, որը դեռ նոր էր ստացել գեներալի ռազմիկներ, հայկական արմատներ ուներ

¹ Սակոս 1836, 319.

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

և գերազանց գիտեր ոչ միայն արևելյան սովորությունները, այլև տեղի ժողովուրդների լեզուն: Կարծ ժամանակում նա կարողացավ այնպիսի վստահություն վայելել բնակիչների շրջանում, որ նույնիսկ Ախալցխայի ըմբոստ ու ռազմատենչ բնակիչները, որոնք անսահմանորեն նվիրված էին թուրքերին, երբեք անկարգությունների չդիմեցին մեր հանդեպ: Անգամ տեղի բեկերը, որոնք նախկինում հայտնի էին իրենց ավագակություններով, մեկ անգամ չէ, որ Բեւբությունի մոտ էին գալիս հավատարմության երդումներով և մեծարում էին նրան փաշայի պես: Երկրամասում նրա ժողովրդականությունը օր-օրի աճում էր: Ամեն օր բնակիչները նրա մոտ էին գալիս բազում խնդրանքներով և զարմանում էին, երբ կառավարչի հետ հաղորդակցվում էին առանց թարգմանիչների, որոնց այստեղ չէին սիրում թարգմանչական մեքենայությունների համար»²:

Դրանով չէ, սակայն, որ իր անոնը հավերժացրեց հայազգի զորավարն այդ պատերազմում: Ռուս-թուրքական 1828–1829 թթ. պատերազմի տարեգրության մեջ կա փառավոր մի էջ, որը պատկանում է բացառապես Վասիլ Բեւբությունին: Դա Ախալցխայի 1829 թ. փետրվարի հերոսական պաշտպանությունն է: Ահմետ բեյի գլխավորությամբ թուրքական քսան հազարանոց մի զորաբանակ, պատերազմում բեկում մտցնելու նպատակով շարժվում է Ախալցխա: Բեւբությունին հրամայված էր ամեն գնով պահել բերդը, թեպետ իր տրամադրության տակ ուներ թուրքականին մի քանի անգամ զիջող ուժեր (ընդամենը երկու գոմարտակ): Ժուրգերը բոլոր կողմերից պաշարում են բերդը՝ ակնկալելով հեշտությամբ գրավել այն: Բեւբությունը այստեղ կարողանում է դրսնորել ոչ միայն դիվանագիտական ունակություններ՝ ամեն անգամ Ահմետ բեյի սպառնալիքներին արձագանքելով ժամանակ շահելուն միտված պատասխաններով, այլև ցուցաբերում է ռազմավարական բարձր գիտելիքներ, որի շնորհիվ Ախալցխան տասներկու օր շարունակ դիմադրում է թուրքական բանակի հարձակումներին. «Գեներալմայոր իշխան Բեւբությունը իր անձնական օրինակով և ներկայությամբ ոգևորում էր յուրաքանչյուրին: Տեսնելով նրան պարիսպների վրա՝ զինվորները միահամուռ գերադասում էին գենքը ձեռքներին մեռնել, քան բերդը հանձնել թշնամուն: Այդ ընդհանուր անվեհերությունը փոխադարձաբար քաջալերում էր նաև հրամանատարին, նոր ուժ

² Պոտտո 1889, 112–113.

Հովհաննիսյան Հ.

ու եռանդ էր տալիս նրան»³ - ասվում էր այդ պատերազմի պատմությանը նվիրված ոռուական հրատարակություններից մեկում:

Ախալցիսայի պաշտումը շարունակվում է մինչև գնդապետ Բուրցովի ջոկատի ժամանումը, որի լուրջ ստանալուն պես, թուրքերը թողնում են պաշտումը և հապճեաւ փախչում բերդի մատուցներից: Արդյունքը եղավ մի քանի հարյուրի հասնող թուրք գերիներ, գրավված թնդանոթներ ու ռազմավար և այդ ամենի դիմաց՝ ընդամենը 24 սպանված և 52 վիրավոր: «Ախալցիսայի պաշտպանությունը անվիճելիորեն դասվում է ռուական բանակի ռազմական մեծ սխրանքների թվին,- գրում է Պոտտոն: - Կովկասում շատերն այդ ժամանակ զարմացան, որ իշխան Բեհրութովը չստացավ իրեն արժանի Գեորգիսյան խաչը, այլ պարզևատրվեց միայն Սր. Աննայի ժապավենով... Այդ ժամանակից արդեն անցել է վարչուն տարի, սակայն Կովկասում դեռևս չեն մոռացել Ախալցիսայի հերոսական պաշտպանությունը, որը մի նոր փառավոր է զ գրեց շիրվանցիների ռազմական տարեգործության մեջ: Չի մոռացվել նաև իշխան Վասիլ Բեհրութովի հերոսական անոնը, որը հետագայում իրեն հավերժացրեց Բաշ-Քադաքլարի և Ջուրուկլարայի ճակատամարտերում»⁴: Բեհրութովի հանդեպ իր հիացմունքը չի թաքցնում նաև գլխավոր հրամանատար Իվան Պասկվիչը և իր շնորհակալագիրն է ուղարկում բերդի պաշտպաններին. «Անկեղծորեն շնորհապարտ եմ Ձեզ, քաջարի մարտիկներ: Ձեր սխրանքներն արժանի են Ձեզ: Դուք ապացուցեցիք, որ կարող եք հայթել ռազմի դաշտում, կարող եք գրավել ամրոցներ և պաշտպանել դրանք...»⁵: Ախալցիսայի պաշտպանության համար Վ. Բեհրութովն արժանանում է նաև ոսկյա սրի և Սր. Աննայի առաջին աստիճանի շքանշանի:

Հմուտ կառավարիչը:

Ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1830 թ. Բեհրութովը նշանակվում է Հայկական մարզի կառավարիչ: Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1838 թ., այսուհետև որոշ ժամանակով թողնում է Կովկասը և նշանակվում լեհական Զամոստիե ամրոցի պարետ: Այսուել է 1843 թ. հոկտեմբերի 10-ին Բեհրութովը ստանում է գեներալ-լեյտենանտի նոր ռազմիրներ: 1844-ի սկզբներին Բեհրութովի կարիքը Կովկասում կրկին զգացվում է: Նա վերադառնում է Կովկաս և նշանակվում Դաղստանի զորքերի հրամանատար: Դա

³ Սակոս 1836, 30.

⁴ Սակոս 1836, 137-138.

⁵ Սակոս 1836, 138.

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

Կովկասի լեռնականների դեմ մղվող պատերազմի ամենից եռուն շրջանն էր, որին անմասն չմնաց հայագիտ գորապետը: 1845 թ. Բեհրութովը պարզւատրվում է Սբ. Վաղիմիրի 2-րդ աստիճանի շքանշանով: 1846 թ. Բեհրութովը գրոհով վերցնում է Այմյակի առվը, իսկ երկու օր անց՝ գլխովին շարդում է Շամիլի ջոկատներից մեկը՝ Կոտահիշիսի գյուղի մոտ: Դազմական այդ հաջողությունների համար Բեհրութովը պարզվատրվում է Գերգիևյան 3-րդ աստիճանի շքանշանով, որին նա վաղուց էր արժանի: Բեհրութովի ջոկատն այնուհետև գրավում է Գերգեբիր անառիկ առվը, որի համար պարզվատրվում է Սպիտակ Արծիվ շքանշանով:

1847 թ. Վերջերին Բեհրութովը նշանակվում է Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետ և գլխավոր վարչության խորհրդի նախագահ: 1849 թ. Անդրկովկասում կատարած արդյունավետ աշխատանքի համար ոռուսական արքունիքը Բեհրութովին պարզվատրում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով, իսկ 1851 թ. նույն շքանշանի ադամանդյա շրջանակով, որը ոռուսական պատմության մեջ բացառիկ դեպքերից էր:

Հ. ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ ՂՐԻՄԻ ՊԱՄԵՐԱԳՈՒՄՈՒՄ

1853 թ. սեպտեմբերի 19-ին Վասիլ Բեհրութովը նշանակվում է Կովկասյան կորպուահ և Ալեքսանդրապոլյան ջոկատի հրամանատար: Ականատեսները վկայում են, որ Բեհրութովի թեկնածությունն անձամբ առաջադրել է Նիկոլայ Առաջինը: Նոյն թվականին սկսված Ղրիմի պատերազմը գեներալ-ադյուտանտ Վ. Բեհրութովի կենսագրականում նոր փառավոր էջեր պիտի գրեր:

Բեհրութովի տված առաջին նշանավոր մարտը Բաշ-Քադաքլարում էր: Նոյեմբերի 14-ին, իր տրամադրության տակ ունենալով ընդամենը 10 հազար զինվոր, Բեհրութովը շարժվում է թուրքական 36-հազարանոց բանակի վրա: Ստանալով այդ լուրը, Ահմետ փաշան շտապում է Բեհրութովին դիմավորել Բաշ-Քադաքլարում, մանավանդ որ տեղեկացված էր Վերջինիս զորքի թվաքանակի մասին: Երդմելով, որ բոլորին պիտի ջարդի, նա նույնիսկ հրամայել էր թուեր պատրաստել՝ գերված զինվորներին և սպաներին սովորական որպես նվեր ուղարկելու համար: Սակայն նրա հաշվարկները շուտով ի դերև ելան: Բեհրութովը, որն անձամբ էր մշակել մարտի պլանը, ուժերի մի մասն ուղղում է դեպի Օղուզլի բարձրունքները՝ թուրքերին նահանջի հնարավորությունից զրկելու համար: Ճակատամարտը սկսվում է երկողմանի կատաղի գրոհներով: Մի պահ ոռուսական բանակի դրությունը ծանրանում է, թուրքերն օգտվելով թվական գերակշռությունից, շրջապատման սպառնալիք են

Հովհաննիսյան Հ.

ստեղծում ոռապական բանակի համար: Այդ ծանր պահին, ինչպես վայել է քաջ հրամանատարին, Բեհրովովը վերցնում է Երևանյան կարարիներների երկու վաշտ և անձամբ գրոհի է տանում նրանց: Այս ձեռնարկն էլ փաստորեն վճռում է ճակատամարտի ելքը. չդիմանալով Բեհրովովի սրընթաց գրոհին, նախ՝ տեղի է տախս թուրքերի աջ թևը, ապա նաև կենտրոնը: Միշ անց, թուրքական բանակը Ամենա փաշայի հետ միասին իր փրկությունը գտնում է համընդիանուր փախուատի մեջ՝ մարտի դաշտում թողնելով 24 հրանոթ, ողջ ճամբարն ու գոմակը: Թուրքական զինուժի կորուստը կազմում է 6 հազար սպանված, այն դեպքում, երբ Բեհրովովը տվել էր ընդամենը 300 զինվորի կորուստ և 900 վիրավոր⁶:

Այս ճակատամարտի մասին ուշագրավ հուշեր է պատմում գեներալ-լեյտենանտ Պավել Ռուտակովը: Հուշերը բավական ծավալուն և ընդարձակ են, ուստի մենք կներկայացնենք այն հատվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են Վասիլ Բեհրովովին. «Թուրքերը ռազմական զգալի ուժեր կուտակեցին Կարսի ուղղությամբ՝ Ալեքսանդրապոլից 70 վերստ հեռավորության վրա, ավերեցին ու թալանեցին սահմանային մեր մի քանի զյուղեր: Ստանալով այդ մասին տեղեկությունը, իշխան Վորոնցովը շտապ կարգով հրամայեց հավաքել մոտ 14 հազարի համառ Ալեքսանդրապոլյան ջոկատը՝ գեներալ-լեյտենանտ, Կովկասի ավագ սերնդի վետերան, քաջի ու օրինակելի զորապետի համբավ վայելող իշխան Վ. Բեհրովովի հրամանատարությամբ... Նոյեմբերի 19-ին իշխանը շարժվեց Բաշ-Քադաքլար... Հապաղել այլս չեր կարելի. իշխանը հրավիրեց ռազմական խորհուրդ և որոշում կայացրեց անմիջապես հարձակման անցնել թուրքերի դեմ, չնայած թշնամու թվական ահենի գերազանցությանը: ... Այս սարսափելի ճակատամարտը հիրավի կարող է դասվել ոռապական բանակի նշանավոր ու հերոսական ճակատամարտերի թվին, որի հաղթանակի պատիվն առանց բացառության և հավասարապես պատկանում էր կովի բոլոր մասնակիցներին՝ հրամանատար Բեհրովովից սկսած մինչև վերջին զինվորը: Իշխան Բեհրովովն այստեղ ցոյց տվեց, որ տիրապետում է անձնական նախանձելի քաջության, երևում էր մարտի ամենավտանգավոր հատվածներում և ոգևորում էր զորքերին այնտեղ, ուր դրա հարկը կար...»⁷, - գրում է ռուս գեներալը:

⁶ Боданович 1876, 252.

⁷ Русская старина 1883, 526–528.

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

Ռազմագետները բարձր են գնահատել գեներալ Բեհրովովի ռազմավարական տաղանդի դրսնորումը այդ ճակատամարտում. «Բաշ-Քադաքլարի ճակատամարտի արդյունքները Անդրկովկասյան երկրամասի համար հսկայական էին... Բեհրովովի ջոկատի վերադարձը Ալեքսանդրապոլ՝ հանդիսավոր էր... Քաղաքի բնակիչները մեծից փոքր, դրոշակներով և սրբապատկերներով դրսու էին եկել դիմավորելու հայթողներին և Արփաչայի առջևի բարձրունքները պատելով, բարձրաձայն բացականչություններով ողջունում էին ջոկատի մուտքը... Հազիվ էր իշխան Բեհրովովը անցել կամուրջը, երբ նրան շրջապատեց ժողովրդի հոծ բազմությունը... հպվելով Բեհրովովի ծիու ասպանդակներին, համբուլում էին նրա ձեռքերն ու ոտքերը»⁸. - գրում է ռուս ռազմական պատմաբան Մ. Բոգդանովիչը, որն, ի դեպ, Ղրիմի պատերազմի մասին չորս հատորանոց աշխատության հեղինակ է:

Բաշ-Քադաքլարի հայթական ճակատամարտից հետո շատերն էին սպասում, որ Բեհրովովը կզարգացնի հարձակումը Կարսի ուղղությամբ և կպաշարի այն: Սակայն, հակառակ դրան, նա իր զորքերը հետ է քաշում Ալեքսանդրապոլ՝ ծմեռելու համար: Բնականաբար, ռազմակայանում գտնվեցին մարդիկ, որոնք մեղադրեցին Բեհրովովին՝ հարձակումը չզարգացնելու և Կարսի բերդը չգրավելու համար: Այդ մարդկանց թվում էր նաև հարազատ Եղբայրը՝ գեներալ-լեյտենանտ Դավիթ Բեհրովովը: 1854 թ. հովարի 17-ին Ալեքսանդրապոլից երրորդ գրած նամակում Վասիլ Բեհրովովը հայտնելով, որ թագավորը տեղեկանալով իր տրամադրության տակ եղած զինուժի մասին, ոչ միայն չի դատապարտել իրեն, այլև պարզմատրել է Գեորգիկան շքանշանով, այնուհետև գրում է. «Այժմ, դիմելով դատավորներին, որոնք գեներալների գործողությունները քննում են ռազմական գործի խիստ կանոններով, ասեմ, որ հայթանակը ձեռք է բերված և խնդիրն իրագործված է, քանի որ թշնամին մեր սահմաններից հեռու է շարուված ու նրա մոռվար ջարոված է: Ես թագավորի ողորմածությամբ կրում եմ Գեորգիկան երկրորդ աստիճանը, զորքերը տեղափոխված են ձմեռանոցներում հենց սահմանի մոտ, իսկ դուք, հարգարժան անողոք դատավորներ, ցանկանում էիք, որ ես, օգտվելով հաղթանակից, գրավեի Կարսը և մնայի այնտեղ ձմեռելու: Լավ և համեղ ճաշից հետո, տաք սենյակում նստած, սիգարը բերանին, ձեզ համար շատ հեշտ է այդպես դատել...»⁹:

⁸ **Богданович** 1876, 252, 256.

⁹ Кавказский сборник 1902, 128.

Հովհաննիսյան Հ.

Բեհրութովի ամենից տպավորիչ ռազմական հաղթանակն, իհարկե, Քյուրուկարայի նշանավոր ճակատամարտում էր 1854 թ. հովհան 24-ին: Թուրքերը, որոնք ոչ մի կերպ չէին ուզում հաշտվել Կովկասյան ճակատում կրած իրենց պարտությունների հետո, փորձում էին բեկում մտցնել պատերազմի մեջ: Այդ «առաքելությունն» իր վրա է վերցնում Մուստաֆա-Զարիֆ փաշան, նպատակ ունենալով ջախջախել Ալեքսանդրապոլյան ջոկատը: Բեհրութովի դեմ հաղթական մարտ վարելու համար նա նոյնիսկ «մշակել» էր հատուկ պլան, որի հեղինակը Ֆրանսիացի գեներալ Գյունոնն էր: Թուրքերը խնդիր էին դրել օգտվել ուժերի իրենց եռակի գերակշռությունից՝ մոտ 60 հազար ասկյար, հարձակվել ոռական ջոկատի վրա, շրջապատել նրան և դրանով ավարտել ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում: Հարձակումը նախատեսվում էր սկսել 1854 թ. հովհան վերջերին:

Հետախուզությունից տեղեկանալով, որ թուրքական գոմակը բռնել է Կարսի ճանապարհը, Բեհրութովը որոշում է օգտվել այդ հանգամանքից և հարձակվել թուրքական բանակի վրա՝ թեպետ իր տրամադրության տակ ուներ ընդամենը 18 հազար զինվոր: Այս ճակատամարտում էլ Բեհրութովն աջքի ընկավ անձնական սխրանքով. ճակատամարտի թեժ պահին, երբ ոռւներին արդեն հաջողվել էր կանգնեցնել թուրքերի առաջխաղացոմը, Բեհրութովը, ջոկատի գլուխն անցած, իր զինվորներին տարավ հաղթական գրոհի: Նրա աջ և ձախ թևում կովում էին նրա երկու հայրենակիցները՝ աջում Լորիս-Մելիքովն էր, իսկ ձախում Նովորոսիյյան դրագունյան չորրորդ գնդի հրամանատար, հայազգի գեներալ-մայոր Տինատուրովը: Ճակատամարտի մասնակիցների թվում էր Սկորելկը, որը հետագայում դարձավ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի Բակվանյան ճակատի հերոս գեներալներից մեկը: Հենց այս հարձակումն էլ վճռորոշ դարձավ ճակատամարտի ելքի հարցում և միայն ոռու զինվորների հոգնածությունը թուրքերին փրկեց վերջնական ջախջախումից: Եվ այդուհանդերձ, Լորիս-Մելիքովի «որսորդները» շարունակեցին թուրքերին հետապնդել մինչև իրենց ճամբար:

Թուրքական բանակի մնացորդները պատսպարվեցին Կարսում: Գնահատելով այս ճակատամարտը, գեներալ Պ. Ռուտակովը գրում է. «Եկավ հուլիսի 24-ը: Օր, որը մի նոր էջ պիտի գրեթ ոռական գենքի հաղթական տարեգրությունում: Այստեղ իր վերջնական հաստատումը գտավ նաև իշխան Բեհրութովի ռազմական փառքը... Մուստաֆա-Զարիֆ փաշան մեր նկատմամբ ունենալով թվական զգայի առավելություն, գրեթե երկու անգամ, խայ-

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

տառակ պարտություն կրեց և գերվեց...»¹⁰: Իսկ այս գրառումն իսկապես ուշագրավ է. «Բեհրութովի հետ միասին ճակատամարտում հրամաններ էին տալիս նաև իշխան Բարյատինսկին, հրետանային մասի պետ Բրիմմերը, հեծելազորային գնդի հրամանատար Բոգովիտը և էլի ուրիշներ... Բոլոր այս հրամանատարների հաջողության փառքն ավելի մեծ էր, քան Բաշ-Բադաքլարում: Սակայն Քյուրուկդարայի փառքը միանձնյա պատկանում էր միմիայն իշխան Բեհրութովին»¹¹:

Գլխավոր գնահատանքն, իհարկե, կայսր Նիկոլայ Առաջինի պարզեն էր: Ստանալով Քյուրուկդարայի հաղթական լուրը, կայսրն իշխանին ուղարկեց Անդրեյ Պերվոզվաննի շքանշանը, որի պատվին ի դեպ, Ռուսաստանում դեռ ոչ գեներալ-լեյտենանտի աստիճանում չէր արժանացել: Իսկ ընդհանրապես, Պետրոս Առաջինի կողմից սահմանած այս պարզենին Ռուսաստանում արժանացել են ընդհանուր մի քանի բարձրաստիճան գինվորականներ: Այս-տեղ էր, որ կայսր Նիկոլայը Բեհրութովին էր ուղղել իր նշանավոր խոսքերը՝ «Իշխան Բեհրութովն ինձ ուզում է զարմացնել իր հաղթանակով, իսկ ես նրան կզարմացնեմ իմ պարզենով»¹²: Ռուս սպաներից մեկը իր հուշերում պատմում է, որ երբ տեղի է ոնենում Բեհրութովին շքանշանի հանձման հանդիսավոր արարողությունը, «սիրված հրամանատարի պատվին հնչում են բուռն բացականչություններ... Ոգևորությունն ու ուրախությունը համընդիանուր էր: Նոյն պահին իշխանի վրա անցկացրին շքանշանի հետ ստացված նոր ժապավենը: Ողջունելով բանակին, իշխան Բեհրութովը նրանց դիմեց հետևյալ խոսքերով. «Տիրակալի բարեհաճության համար ես առաջին հերթին պարտական եմ Ձեզ, պարոնայք սպաներ, և Ձեզ, իմ սիրելի գինվորներ: Ձեզ համարում եմ իմ անվամբ պարզմատրվածներ: - Պատրաստ ենք ծառայելու, գեներալին ողջունեցին գինվորները և այդ ողջունն անկեղծ էր... Իշխան Բեհրութովի հանդեպ մեր՝ սպաներիս ջերմ զգացումներն արտահայտվեցին նրա խրճիթում, իր բացած աղ ու հացի շուրջ... »¹³:

Ռուս գեներալ Պ. Ռուտակովի հուշերում առավել հետաքրքրականը Բեհրութովի անձի բնութագրությունն է. «Իշխան Բեհրութովի հետ ես ծանոթացա արշավանքի նախօրյակին,- գրում է նա, - այնուհետև նրա հետ եղա բոլոր ճակատամարտերում և վերջապես՝ ծմուն մի քանի ամիսները միասին անցկաց-

¹⁰ Русская старина 1883, 529.

¹¹ Русская старина 1883, 529.

¹² Русская старина 1883, 529.

¹³ Военный сборник 1860, 166–167.

Հովհաննիսյան Հ.

րեցինք Ակեքսանդրապոլում... Բեհրովթովը ծագում էր հայկական նշանավոր տոհմից, պատանեկությունն անց էր կացող Պետերբուրգում՝ ստանալով աշխարհիկ լավագույն կրթություն: Ծառայել է սկզբում գվարդիայում, այնուհետև ուղարկվել է Կովկաս: Ականատեսը լինելով բազում փորձությունների ու դժվարությունների, Բեհրովթովն այս պատերազմում իրեն դրսնորեց բացառապես գերազանց կողմերով և խսկական հերոսի հոչակ ձեռք բերեց... Կառուցվածքով տիպիկ հայկական բնութագիր ուներ. բավական մեծ քթի հետ միասին ուներ փոքր, սակայն շարժուն, խորաթափանց ու իմաստություն արտահայտող աջեր: Մազերը, որ զգացվում էին, որ երբնէ սև եղել, այժմ արդեն բավականին ճերմակել էին: Դեմքը ժայխտ էր արտահայտում, հասակը միջինից փոքր-ինչ բարձր էր... իրանը նիհարավուն էր և տարիքից չափից ավելի կորացած: Նրա քայլվածքը կենդանի էր ու բարի... օժտված էր զինվորի հետ վարվելու մեծ շնորհով և մշտապես նրանց ոգևորում էր սիրալիր խոսքերով... Չատանալով զինվորական հատուկ կրթություն,- շարունակում է այնուհետև Ռուսակովը,- իշխանն իրեն չէր համարում ոչ հմուտ ռազմագետ և ոչ էլ նշանավոր տեսաբան, սակայն օժտված լինելով բնատուր խելքով ու փորձառությամբ և տիրապետելով մեծ քաջության, իր բոլոր արժանիքներով հանդերձ, նա մարմնավորում էր հրամանատարի ու կազմակերպչի հրաշալի կերպար, որի ղեկավարության տակ ենթակաների համար ծառայելը դյուրին էր և հաճելի... զինվորների շքանշանները Բեհրովթովն անձամբ էր հանձնում և բոլորին մեկ առ մեկ նվիրում էր մի բարի խոսք, որը նրանք համարում էին որպես թե երկրային պարգևն»¹⁴:

Ռուս գեներալ Ա. Զիսսերմանը, ով ժամանակին քննադատել էր Բեհրովթովին Բաշ-Քադաքլարից հետո ցուցաբերած «անվճականության համար», հետագայում ստիպված էր խոստովանել, որ. «Քուրուկդարայի ճակատամարտը նշանավոր գեներալի նշանավոր ճակատամարտերից մեկն էր: Իշխան Բեհրովթովը խելացի ու կրթված անձնավորություն էր: Իր էությամբ լինելով գերազանց կազմակերպիչ, նա գիտեր հաղորդակցվել զինվորի հետ և հոգալ նրա մասին, արժանի և սիրալի էր նաև սպաների հանդեպ»¹⁵:

Եվ այդուհանդերձ, Քուրուկդարայի ճակատամարտից հետո Կովկասյան գործող կորպուսը 1855թ. մայիսից նոր հրամանատար ունեցավ, ի դեմս գեներալ Նիկոլայ Մոլավյովի (ռազմագիտության մեջ հայտնի է որպես Մոլավ-

¹⁴ Русская старина 1883, 528.

¹⁵ Русский архив 1888, 227.

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

յով-Կարսովի – Հ.Հ.): Նրան էլ հանձնարարվեց գլխավորել ռազմական հետագա գործողությունները:

Վասիլ Բենեբությունը նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ և գործող կորպորատիվ մեջ չմտնող Կովկասյան առանձին բանակի հրամանատար: Այսուհետև մեկ տարի՝ 1856–57 թթ., Բենեբությունը վարում է Կովկասի գլխավոր վարչությանը կից ժամանակավոր կոմիտեի նախագահի պաշտոնը, իսկ մի կարճատև ժամանակ, մինչև նոր կառավարչապետ Միխայիլ Բարյատինսկու ժամանումը, կատարում է Կովկասի փոխարքայի պարտականությունները: 1857 թ. հունվարի 6-ին, Սուլք Ծննդյան օրը, հայազգի գեներալ ստանում է հետևազորի (ինֆանտերիայի) գեներալի պատվավոր աստիճան. համեմատության համար, նշենք, որ նոյն աստիճանով իր մահկանացուն է կնքել նաև Կովկասի լեգենդար գորավար Ալեքսեյ Երմոլովը:

Վասիլ Բենեբությունի մասին պատմող հուշերը ռուսական ամսագրերում բավական շատ են, ինչը վկայում է նրա ռազմական մեծ վաստակի ու հմուտ գորավարի համբավի մասին: Այս հուշերի հեղինակն, օրինակ, հայազգի գորապետի ծառայակիցներից Միխայիլ Օլշևսկին է, Կովկասյան հատուկ կորպորատիվ շտարի պետը: Հուշերը վկայում են, թե ոռու գեներալը որքան քաջատեղյակ է Բենեբությունի կենսագրական ու ռազմական կառքի մանրամասներին. «Իշխան Բենեբությունը պատկանում է սակավաթիվ այն պատվավոր տոհմերի թվին, որոնց հայրենիքը լինելով Հայաստանը, բարձրագույն տեղ են գրավել Վրաստանի նշանավոր իշխանական տների շարքում: Նրա նախնիները առաջնային դիրք են ունեցել վրաց արքունիքում և աչքի են ընկել բազում հերոսական գործերով... Իշխան Վասիլի Օսիպովիչը, որն ամենից կրտսերն էր երեք եղբայրների մեջ, Վրաստանում առաջին իշխանն էր, որն իր դաստիարակությունը ստացավ Պետերբուրգում: Ավարտելով կադետական առաջին կորպուսը, 1809 թ. եկավ Թիֆլիս և սկզբում ծառայության անցավ գեներալներ Տորմասովի և Պառպուչի մոտ, ապա դարձավ Երմոլովի համհարզը: 1821 թ. Վ. Բենեբությունը նշանակվեց Մենզելյան գնդի հրամանատար, Ախալցխայի գրավումից հետո՝ Ախալցխայի փաշայության կառավարիչ, իսկ 1830–1838 թթ.՝ Հայկական մարզի կառավարիչ...»¹⁶: Ուստի գեներալն այնուհետև ուղագրավ մանրամասներ է պատմում նրա ռազմական նշանավոր գործողություններից՝ ամենուր դրվատանքի խոսքեր ուղղելով Բենեբությունի հասցեին:

¹⁶ Ռուսական արխիվ 1888, 172.

Հովհաննիսյան Հ.

«Ռուսկայա ստարինա» ամսագրում էլ Բեհրութովի մասին իր տպավորություններն է կիսել նշանավոր կովկասագետ Ալ. Բերժեն: Թեատր հեղինակի հրապարակման գիսավոր դեմքը կառավարչապետ Նիկոլայ Մոլավյովն էր, այդուհանդերձ, Բերժեն ուշագրավ զուգահեռներ է անցկացնում նրա և Բեհրութովի միջև: Բերժեն նախ ներկայացնուում է Մոլավյովի կարծիքը հայազգի զորապետի մասին. «Գործող կորպուսի հրամանատար Վասիլ Բեհրութովը՝ Բաշ-Քադաքարի և Քյուրուկդարայի արժանի հաղթողը, իմ երիտասարդական տարիների ծառայակիցն է. իմ խորին հարգանքն եմ արտահայտում նրա հերոսությունների հանդեպ, որոնք պահպանեցին այս երկրամասը... Ժամանելով այստեղ, ես զորքերը գտա գերազանց վիճակում, որոնք ենթակա էին գեներալ-լեյտենանտ իշխան Վ. Բեհրութովին»¹⁷:

Բերժեն այնուհետև հետաքրքիր դիտարկում է անում. «Այսպիսին էր Մոլավյովի կարծիքն իշխան Բեհրութովի մասին, որին նա ուղարկեց Թիֆլիս՝ տալով նրան այն զորքերը, որոնք չէին մտնում գործող բանակի կազմի մեջ: Ուստի հարց է առաջանում, - շարունակում է Բերժեն, - ինչը՝ ստիպեց կառավարչին, իր ուսերից վայր դնել հրամանատարական արժանի դիրքը և անձամբ գրավել այդ տեղը և որքանով գործը դրանից շահեց»¹⁸: Բերժեի կարծիքով, այդ ամենի «մեղավորն» ինքը Բեհրութովն էր, քանի որ «Մոլավյովն անտարբերությամբ չէր նայում իր ավագ ընկերոջ ռազմական սիրանքներին, ինչը չէր կարող նրա մեջ նախանձի հասկանալի զգացում չառաջացնել»¹⁹- գրում է նա:

Ավելին, համեմատական զուգահեռներ անցկացնելով ռուսական բանակի երկու զորապետերի միջև, Բերժեն, ի վերջո, նախապատվությունը տալիս է հայազգի զորապետին. «1855 թ. սեպտեմբերի 17-ի Կարսի անհաջող գրոհից հետո զորքերի մեջ կորավ Մոլավյովի նկատմամբ հավատը՝ պատերազմը հաղթական ավարտի հասցնելու խնդրում, որն ամենուր իր ժամանակին ուղեկցում էր իշխան Բեհրութովին: Համընդիմանուր կարծիքով, նրա դեմ չէր կարող կանգնել նաև Կարսը: Մենք ևս այդ կարծիքին ենք, - գրում է Բերժեն: - Իշխան Բեհրութովի առավելությունը Ն. Մոլավյովի նկատմամբ միանգամից աչքի էր զարնում... Բեհրութովը տիրապետում էր շնորհների, որոնք անհամե-

¹⁷ Русская старина 1873, 608.

¹⁸ Русская старина 1873, 608–609.

¹⁹ Русская старина 1873, 608–609.

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

մատ ցայտուն էին, քան ուներ Մուլրավյովը, չխոսելով արդեն այն մասին, որ նա միաժամանակ գերազանց կազմակերպիչ էր ու կառավարիչ»²⁰:

Որպես ասվածի հավելում, կցանկանայինք մեջբերել ոուս գեներալներից մեկի հուշերից ուշագրավ մի հատված. «ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ ՎԻԽՍԵԼՈՒԾ ԻԵՍՈՆ, ՄԵՆՔ ՉՅԱ ԻԱՅԱԽ ԷԻՆՔ ԻԻՉՈՒՄ Ֆյուրուկրարայի փառավոր ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ: ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՆՎԵԼՈՒՆ ՊԵՆ՝ ՈՂՋՈՒՆԻ ԲԱԳԱԿԱՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ՏՀԻՆ ԴԱԴԱՐՈՒՄ, ԻԱՏԼԱՎԵՍ ԵՐԲ ՆԱ ԳՈՄԱՐՏՈՎԵԼԻ ԳՈՄԱՐՏՈՎ ԷՐ ԱՆՃՆՈՒՄ, ԻԱՐՅՈՒԹՎԱԿԻՑ ԻԱՐՅՈՒՐԱԿ: ԶԻՆՎՈՐՆԵՐԸ ԻԻՇՎԱՆՔՆՎ ԷԻՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԻՐԵՆԸ ԻՐԱՄԱՆԱՏՈՐԻՆ... Այն ԺԱՄԱՆԱԿ, ՄԵՆՔ ՄԵԾ ԻԳԼՈՐՈՒԹՅԱՄԲ ԷԻՆՔ ԹԱՄԲՈՒՄ ՄԵՐ ԾԻԵՐԸ և առաջ էինք սլանում՝ խիզախելու անսանձ ծգտումով...»²¹:

Ուր էլ որ ծառայել է հայազգի զորապետը, ամենուր թողել է հմուտ ու ազմագետի և խելացի կազմակերպիչ համբավ: Ուստի զարմանալի ոչինչ չկա նրանում, որ նրա հետ ծառայություն կատարած ոուս բարձրաստիճան սպաներն ու պաշտոնյաներն այդպես գովեստով էին խոսում նրա անճնական բարձր որակների մասին. «ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ, - գրում է Կովկասին քաջածանոթ գեներալ Ինսարսկին, - հումկու անուն է Կովկասում: Նա բավական հեղինակություն և հոչակ ոնի ողջ Ռուսաստանում: Հայտնի է, որ արևելյան պատերազմի նախօրյակին նա իրավիրվեց ՊԵՏԵՐԲՈՒԼԳ՝ գլխավորելու Կովկասյան մեր սահմանների պահպանությունը՝ համոզված լինելով, որ նրան, որպես տեղացու և խելացի անձնավորության, քաջ հայտնի են ժողովրդի ոգին և պաշտպանության ամենատարբեր միջոցները: Իշխան ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԵՐԲՈՒԼԳ ԻՀԱՆԱ Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՈՎՈՎՈՒԹՅՈՒՆ՝ շնորհիվ իր խելքի և իմաստության... Երբ պատերազմը սկսվեց, ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ դարձավ կովկասյան բանակի գլխավոր իրամանատար և այնպիսի մեծ գործեր կատարեց, որոնք ավելի բարձրացրին նրա փառքը»²²: Նույն գնահատականն է նաև «Կավկազ» թերթում Վ. ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ նվիրված այս ակնարկում. «Ավելի քան կես դար շարունակ, գործունեության մի ոլորտից անցնելով մյուսը, - գրում էր թերթը, - հայազգի նշանավոր այս զորավարն աճեց ու հասունացավ իր բարձրագույն ծառայողական կոչման համար, իսկ վերջերս արժանացավ նաև թագավոր կայսեր մեծ վստահությանը»²³:

²⁰ Русская старина 1873, 608–609.

²¹ Военный сборник 1863, 486.

²² Русский архив 1868, 1007–1008.

²³ Кавказ 1854, N 27.

Հովհաննիսյան Հ.

Հայազգի գրապետն իր մահկանացուն կնքեց 1858 թ. մարտի 10-ին, Թիֆլիսում՝ սերունդներին թողնելով քաջարի ու հմուտ գրավարի վաստակած անուն: Ինչպես գրում է ոռու պատմաբան Վ.Պոտտոն, «ոռու գրապետերից քչերին հաջողվեց այդպիսի անուն վաստակել ու դրվատանքի արժանանալ ոռու հասարակայնության շրջանում»²⁴: Հայազգի գրապետին նվիրված ակնարկն ուզում ենք պարտել մեր մեծանուն հայրենակցի՝ Խաչատուր Աբովյանի հետևյալ տողերով. «Մադաթովի ու Բեհրովովի արածը բավական է, որ աշխարջը իմանա, թե ինչ հոգի ուներ էն ժամանակ մեր ազգը»²⁵: Եվ դա ճշմարտություն էր...

Եղրակացություններ

Ծառայության անցնելով ուազմական և քաղաքացիական ոլորտներում, Վասիլ Բեհրովովն ամենուրեք վաստակեց հմուտ հրամանատարի ու կառավարչի համբավ: 1819–1820 թթ. Բեհրովովը մասնակցություն է ունենում Կովկասի լեռնականների դեմ սկսված կոհիվներին, աչքի ընկնում ուազմական խորը գիտելիքներով և մարտը վարելու արտաստվոր ունակություններով: Բեհրովովը պարզմատրվում է Սբ. Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանով:

1828 թ., երբ սկսվեց ոռու-թուրքական պատերազմը, գլխավոր հրամանատար Իվան Պասկիչը Բեհրովովին հրավիրեց գործող բանակ և նրան վստահեց ջոկատներից մեկի հրամանատարությունը: Բեհրովովի առաջին ակնառու հաջորդությունն այս պատերազմում Ախալցխայի բերդի գրավումն էր:

Ոռու-թուրքական 1828–1829 թթ. պատերազմի տարեգրության մեջ կա փառավոր մի էջ, որը պատկանում է բացառապես Վասիլ Բեհրովովին: Դա Ախալցխայի 1829 թ. փետրվարի հերոսական պաշտպանությունն է: Հայազգի գրապետի ցուցաբերած ուազմավարական բարձր գիտելիքների շնորհիվ Ախալցխայի բերդը տասներկու օր շարունակ դիմադրեց թուրքական բանակի հարձակումներին և բերդը անառիկ պահեց: Ախալցխայի բերդի պաշտպանության ժամանակ ցուցաբերած արիության համար Վասիլ Բեհրովովն արժանանում է ոսկյա սրի ու սրբ. Աննայի առաջին աստիճանի շքանշանի:

Ոռու-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1830 թ., Բեհրովովը նշանակվում է Հայկական մարզի կառավարիչ: Այդ պաշտոնը նա վարում է մինչև 1838 թ., այնուհետև որոշ ժամանակով թողնում է Կովկասը և նշանակվում լեհական Զամոստիե ամրոցի պարետ: Այստեղ էլ 1843 թ. հոկտեմբերի

²⁴ Պոտտո 1889, 138.

²⁵ Աբովյան 1984, 157:

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵՒԲՈՒԹՅՈՒՆ

10-ին Բեհրովովը ստանում է գեներալ-լեյտենանտի նոր ռազմիքներ: 1844 թ. նա վերադառնում է Կովկաս և նշանակվում Դաղստանի զորքերի հրամանատար:

1847 թ. վերջերին Բեհրովովը նշանակվում է Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետ և գլխավոր վարչության խորհրդի նախագահ: 1849 Անդրկովկասում կատարած արդյունավետ աշխատանքի համար ռուսական արքունիքը Բեհրովովին պարգևատրվում է Ալեքսանդր Նևսկու շքանշանով, իսկ 1851 թ. նույն շքանշանի ադամանդյա շրջանակով, որը ռուսական պատմության մեջ բացառիկ դեպքերից էր:

1853 թ. սեպտեմբերի 19-ին Վասիլ Բեհրովովը նշանակվում է Կովկասյան կորպուսի և Ալեքսանդրապոլյան ջոկատի հրամանատար: Նույն թվականին սկսված Ղրիմի պատերազմը գեներալ-ադյուտանտ Վ. Բեհրովովի կենսագրականում բազում փառավոր էցեր ախտի գրեր: Բեհրովովի տված առաջին նշանակոր մարտը Բաշ-Բադաջլարում էր:

Բեհրովովի ամենից տպավորիչ ռազմական հաղթանակն, իհարկե, Քյուրուկի արարայի նշանակոր ճակատամարտում էր՝ 1854 թ. հունիսի 24-ին: Այս ճակատամարտում իր վերջնական հաստատումը գտավ նաև իշխան Բեհրովովի ռազմական իհարքը:

Հետագայում Վասիլ Բեհրովովը թողնում է ռազմական ծառայությունը և նշանակվում է Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչ: Հայազգի զորագետն իր մահկանացուն կնքեց 1858 թ. մարտի 10-ին, թիֆլիսում՝ սերունդներին թողնելով քաջարի ու հմուտ զորավարի վաստակած անուն: Ինչպես գրում է ռուս պատմաբան Վ. Պուտոռն, «ռուս զորապետերից քչերին հաջողվեց այդպիսի անուն վաստակել ու դրվատանքի արժանանալ ռուս հասարակայնության շրջանում»:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Խ. 1984, Երկեր, Երևան, «Սովետական գրող», 449 էջ:

Богданович М. 1876, Восточная война, 1853-1856 годов: СПб., тип. Ф. Сущинского, т. I, II, III, IV, 278, 40 с.

Военный сборник, 1860, т. 13, с. 166-167.

Военный сборник, 1863, N 2, с. 486.

Русская старина, 1883, N 12, с. 526-529.

Кавказский сборник, т. XXIII, Тифлис, 1902, с.128.

Кавказ, 1854, N 27.

Հովհաննիսյան Հ.

Потто В. 1889, Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях. Турецкая война 1828–1829 гг., СПб., т. 4, 731 с.
Русская старина, 1883, № 12, с. 528.
Русский архив, 1888, № 10, с. 172–227.
Русская старина, 1873, № 10, с. 608–609.
Русский архив, 1868, кн.8, с. 1007–1008.
Ушаков Н.И. 1836, История военных действий в Азиатской Турции в 1828–1829 гг., ч. 1, СПб., 439 с., ч. 2, 326 с.

ГЕНЕРАЛ ВАСИЛ БЕБУТОВ

ОГАНЕСЯН А.

Резюме

Ключевые слова: генерал Бебутов, армянский полководец, русская армия, война, победы, летопись, вклад.

Генерал Василий Осипович Бебутов (1791–1857) вписал блестящие страницы в летопись русского военного искусства и был представлен почти ко всем высшим наградам русской армии. Во время Крымской войны получив известие о победе русских войск в Кюрукдаринском сражении в 1854 г., император Николай наградил генерала Бебутова орденом Андрея Первозванного, которым в генерал-лейтенантском чине в России еще никто не был награжден. Увековечив свое имя на полях сражений, генерал Бебутов навсегда остался и в памяти армянского народа.

GENERAL VASIL BEBUTOV

HOVHANNISYAN H.

Summary

Key words: General Bebutov, Armenian commander, Russian army, war, victories, chronicle, contribution.

ԳԵՆԵՐԱԼ ՎԱՍԻԼ ԲԵԲՈՒԹՈՎ

The article is devoted to the military leadership activities of the outstanding Armenian general Vasil Osipovich Bebutov (1791–1857) and highlights his decisive role in the victories of the Russian army. General Bebutov wrote glorious pages in the annals of Russian military art, received almost all the highest awards of the Russian army. So, having received the news of the victory of the Russian troops in the battle of Kurukdara in 1854 during the Crimean War, Emperor Nicholay awarded General Bebutov with the Order of Andrey Pervozvanny, which no one had ever received in the rank of a General-Lieutenant in Russia. General Bebutov's name immortalized on the battlefields remained in the memory of the Armenian nation too.